


իան, ըրեղև տկարութիւն մը ևս վրայ հասնելով, կամ հիւանդանոցներու մէկ անկիւնը իւր թշուառ կեանք կը վճարէ, և կամ իւր ընտանեաց քով իւր և իւր ընտանեաց թշուառութիւններուն չը կրնար տոկար, իւր յուսահատ կեանքը անձնասպանութեամբ կը վճռէ, հակառակ աստուածային և մարդկային ամեն օրինաց, և այս եղանակաւ ինքք կը վերջանայ, բայց իւր թողած թշուառութիւնը կը մնայ և կը շարունակէ այդ խղճալեաց վրայ, և գնացողի ետեւէն կ'երթայ անէ՛ք նզովք նախատինք ու արհամարհանք: Ահա իրենց դէմ հասակի մէջ բարեօր չընթացողը և տնտեսութիւնը չը գիտցող և ինչպիսիք թեան ետեւէն չը գնացողներուն վիճակը և վախճանը:

Խորին Վարդապետ
Միխայիլեան:



ՇՈՒՇԱՆ

Շ Ա Ի Ա Ր Շ Ա Ն Ա Յ

Շարագրեաց


Գ. Վ. Սրբանկաբեանց .

Հինգերորդ դարու Հայոց Ազգի սքանչելի նահատակութեան հանդէսն, որ անմահացած է եղիչէ Վարդապետի անմահ գրչաւ և ժամանակ ժամանակ եռանդ ու խանգ աղբս է հայրենասէր ոգիներու և բաղմամբիւ երգաբաններ ու վիպասաններ յերեւան հանած աղբային գրական ասպարիղի վերայ, այս անգամ նոյն բոցալաւ եռանդով ողբելորած է Ղլարեգին վարդապետն Սրբանձտեանց, Հայոց Ազգին

գին Շուարշանայ ծաղիկներէն Շուշան մի ընծայելու, որ հայրենասիրութեան ուղևով ստոգուած է, քրիստոնէական ցօղով զուարթացած և Հայ Հայրենեաց արեւով ծաղկած և սուծացած:

Սիրուն է այս Շուշան, վասն զի Հայրենասիրութեան և Ազատութեան հոտ կը բուրէ: Քեղեցիկ է այս Շուշան, վասն զի կը գրաւէ ու կը տանի մեր հոգին ու սիրան այն դարն, որ Հայոց կենդանութեան դարն է, այն դաշտն, որ Հայոց քաջաց նահատակութեան դաշտն է, այն դարաստանն, որ ծաղիկոյց եղած է ոչ թէ անձրեւաբեր ամպերէն, այլ մեր սուրբ և արիւնարուղիս վիպից ցանեալ և ցրուեալ սպիտակ սկիւրներէն:

Ո՛վ որ զՀայն նոյն դաշտն ու դարաստանն կը տանի, իւր կենդանութեան վայրն կը տանի, և ո՛վ որ կենդանութիւն կը սիրէ, պէտք է որ նոյն դաշտէն ծաղիկ մը հոտոտէ, այսօր Վարդ, վաղիւն Շուշան, ասրա Մանիշակ, ապա Քալասան, և այլն:



ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Յունաց նորնոր Պատրիարքն Սուրբ Յարութեան Աշխարհամտորան Տաճարին մէջ հանգիստապէս Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ, և օթն եպիսկոպոսաց ձեռօք, ՚ի ներկայութեան եկեղեցական և աշխարհական խուռն բաղմութեան:

Ձեռնադրութենէն զինի սրաշտոնական այցելութիւններն սկսան, և այժմ Պատրիարքական վարչութեանն նորոգ

ձեւ տարով և նոր ժողովներ կազմելով կը շարունակէ իւր մեծ պաշտօնն : Քաղաքացիք, որ Վանուց միաբանութեան հետ գժտութեան մէջ էին, նորա եւս հաշտուեցան և այժմ կը տիրէ խաղաղութիւնն :

Սոյն հաշտութեան աւթիւ Նորընտիր Պատրիարքն Քաղաքացւոց Պէտէլիէի տուրքն վճարեց Տերութեան, մօտ հազար Օսմանեան ոսկի : Այնպէս կը խօսուի որպէս թէ սոյն գումարն Պատրիարքն իւր քսակէն վճարած է :

Մտացանք ասել, որ տեղւոյս Ռուսաց Հիւպատոսարանն ու Հոգեւորականութիւնն եւս հաշտուեցան Յունաց Միաբանութեան հետ և այժմ ինչպէս որ Նորընտիր Պատրիարքի առուն կը յիշուի Ռուսաց Եկեղեցւոյն մէջ, նոյնպէս և Ռուսաց կայսեր առունն Յունաց Եկեղեցւոյն մէջ . սոյն յիշատակութիւններն երկու տարիէն ՚ի վեր գաղբած էին գժտութեան պատճառաւ :


- Քաղաքիս ուրուկներն (միսկիններն) որոց համար Տերութիւնն քաղաքէն արտաքոյ յատուկ բնակարան շինած էր և ցարդ շէին ուղեր իրենց հին տեղն թողուլ, որ մեր Վանուց կալուածներուն մէջն էր, ներկայ ամսոյս մէջ Վսեմ. Փաշայի ազգու միջամտութեամբ տեղափոխուեցան և այժմ քաղաքէն արտաքոյ կը բնակին, Տերու-

թեան կողմէն, իբրև ողորմութիւն, տատեսա եւս ընդունելով :

Բոլոր քաղաքը երախտապարտ է այս մասին Վսեմ. Փաշային, որ այս կնճռալեց գործը ամենայն խոհեմութեամբ և խաղաղութեամբ ՚ի գլուխ հանեց :

- Թիէ և ՚ի Յոսպէ և ՚ի յԵրուսաղէմ քօլէրայի նշան ամենեւին չ'երեւիր, բայց քաղաքական Վարչութիւնն սկսած է ամեն կարեւոր զգուշութիւններ ձեռք առնուլ ՚ի մասին մարքութեան և բանջարեղինաց ու մրգեղենաց անվնասահարութեան :

Այլ լսուի թէ Գամասկոսի մէջ քօլերայի դէպքերն նուազած են արդէն, և յոյս կայ որ քանի մի մերձաւոր քաղաքներու մէջ եւս կը նուազին և ժողովուրդն կ'ազատի տագնապէ և մտատանջութենէ :



Վ Ր Ի Պ Ա Կ

(Տէ՛ս Բի- 6 նախորդ Սի՛մի :)

Երե՛ս	Սի՛աւ	Ո-ղէ՛ւ
126	բրդունճները	բրդունքները
128	խէղճ	խեղճի
129	անձրեւոյ	արծուոյ
131	բռնաւորութիւր	բանականութիւր
133	հաւանական	գաղանական

